



Հաջորդ Հղումը

Դեպի ավելի լավ ու անվտանգ համացանցային
միջավայր յուրաքանչյուր երեխայի համար



the

Next

click

Բովանդակություն

Ինչ կարող ենք անել համոզվելու, որ երեխաներն առցանց անվտանգ միջավայրում են

1 Նախաբան.....	4
2 Ամփոփագիր.....	5
3 Երեխաները, երիտասարները և Համացանցը. Ակնարկ.....	6
3.1 Դրական ուժ աշխարհում.....	6
3.2 Հասնել ճիշտ հավասարակշռության.....	6
3.3 Վիրտուալ և իրական աշխարհներն ավելի ու ավելի են մոտենում.....	6
3.4 Ինտերակտիվ և կլանող աշխարհ.....	6
3.5 Թվային ջրբաժանը.....	6
3.6 Կառավարությունների և միջազգային գործակալությունների դերը.....	7
3.7 Էական է բազմաշահառու մոտեցումը.....	8
4 Երեխաների խոցելիությունները.....	10
4.1 Նյութը.....	10
4.2 Շփումներ.....	10
4.3 Վարքագիծ.....	10
4.4 Առևտուր.....	11
4.5 Կախվածություն.....	11
4.6 Հասարակական.....	11
5 Հիմնական առաջարկություններ.....	12
5. 1 Նոր Դիրեկտիվը և ինստիտուցիոնալ հարցեր.....	12
5.2 Մասնակցության իրավունքի ապահովում յուրաքանչյուր երեխայի համար.....	13
5.3 Երեխաների իրավունքների համակողմանի ռազմավարություն մշակելու անհրաժեշտությունը	13
5.4 Միջազգային առաջատար դերի խրախուսում.....	14
5.5 Պայքար երեխաների հանդեպ առցանց ռոտնձգությունների և ռոտնձգություններ պարունակող պատկերների տարածման դեմ.....	14
5.6 Օժանդակություն մասնագետներին և ապաքինման ծրագրեր.....	16
5.7 Ինչպես ստեղծել գովազդի, էլեկտրոնային առևտրի, գաղտնիության և տվյալների պաշտպանության նոր ստանդարտներ	17
5.8 Շարժական ինտերնետի մատակարարներ և Տեղաորոշման ծառայություններ.....	19
5.9 Նավարկելով ինտերակտիվ և կլանող աշխարհում.....	20
5.10 Ինչպես սոցիալական ցանցերի կայքերը դարձնել ավելի անվտանգ.....	21
5.11 Ինչպես վերացնել իրավական արգելքները.....	21
5.12 ՀԿ-ների մասնակցությունը քաղաքականության մշակմանը.....	21

1 Նախաբան

Համացանցի՝ սահմաններ չճանաչող բնույթը նշանակում է, որ գուտ ազգային մոտեցումները դրա մարտահրավերներին դիմակայելու ճանապարհին հաջողությամբ չեն պսակվելու: Եվրամիությունը (ԵՄ)՝ մյուս կողմից բավական մեծ ու հզոր է լուրջ խաղացող լինելու համար: ԵՄ-ն կարող է հրավիրել բոլոր խոշոր դերակատարների ուշադրությունը, և սա լիովին համահունչ է համաշխարհային անցուդարձի տարբեր ոլորտներում վերջինիս առաջադար դերին:

Երեխաների առցանց ապահովության եվրոպական հասարակական կազմակերպությունների դաշինքը (eNACSO)-ն ցանց է, որի նպատակն է առավել ապահով դարձնել Համացանցը և հարակից տեխնոլոգիաները երեխաների և երիտասարդների համար: eNACSO-ն խթանում և օժանդակում է ծրագրերին ազգային, եվրոպական և միջազգային մակարդակներում: Մեր աշխատանքը հիմնված է Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի 1989թ. կոնվենցիայի և Երեխաների վաճառքի, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնագրաֆիայի մասին կամընտիր արձանագրության վրա:

eNACSO-ի անդամներն առաջատար են երեխաների իրավունքների և երեխաների պաշտպանության հարցերով զբաղվող ՀԿ-ների շարքում ԵՄ-ի անդամ երկրներում, ինչպես նաև համագործակցում են ԵՄ-ի անդամ չհանդիսացող և ոչ եվրոպական պետություններում գործող ՀԿ-ների հետ:

Հաջորդ Հղումը ներկայացնում է eNACSO-ի առաջարկությունները ԵՄ-ին, տնտեսության տվյալ ճյուղին, միջազգային կազմակերպություններին և այլ շահառուներին այն մասին, թե ինչպես ստեղծել ավելի լավ ու անվտանգ համացանցային միջավայր երեխաների և երիտասարդների համար:

Մինչ սույն փաստաթղթի լեզուն առավելապես համապատասխանեցված է միջազգային կառույցների և ֆորումների բառապաշարին, այդուհանդերձ հուսով ենք, որ այն նաև կհետաքրքրի ազգային մակարդակում երեխաների համացանցային պաշտպանության հարցերով զբաղվող անձանց: Ծրագիրը համաֆինանսավորում է Եվրամիությունը՝ Առավել անվտանգ Համացանց ծրագրի շրջանակներում՝

ec.europa.eu/saferinternet

Ինչպես կարող ենք ապահովել երեխաների առցանց անվտանգությունը

- 👉 Հզորացնել երեխաների կարողությունները, որոնք կօգնեն լինել ավելի ուժեղ, տոկուն և ինքնավար թվային քաղաքացիներ
- 👉 Պայքարել երեխաների առցանց չարաշահումների տարածման դեմ
- 👉 Պայքարել երեխաների ծանրաբռնություն արտահայտող պատկերների տարածման դեմ
- 👉 Մոցիալական ցանցերը դարձնել ավելի անվտանգ յուրաքանչյուր երեխայի համար
- 👉 Պաշտպանել երեխաներին կոմերցիոն նպատակներով առցանց չարաշահումներից և ապահովել նրանց անձնական կյանքի գաղտնիությունը
- 👉 Սատարել ՀԿ-ի մասնակցությունը երեխաների Համացանցային անվտանգության քաղաքականության մշակմանը

1 www.unhchr.ch/html/menu3/b/k2crc.htm

2 Սույն փաստաթղթում օգտագործվում է «Երեխայի շահագործման պատկերներ», այլ ոչ «մանկական պոռնոգրաֆիա», քանի որ այն ավելի ճշգրիտ է արտացոլում դրա բնույթը:

2 Ամփոփագիր

Քանի որ Համացանցը հարթակ է տրամադրում ուսումնառության, ստեղծարարության, հաղորդակցության և խաղերի համար, այն խիստ արժեքավոր և գրավիչ է ողջ աշխարհի հարյուրավոր միլիոն երեխաների և երիտասարդների համար, ովքեր ամեն օր օգտվում են դրանից: Համացանցը և այն անթիվ ու անհամար սարքերը, որոնք միանում են Համացանցին, երեխաներին և երիտասարդներին տրամադրում են խիստ արժեքավոր նոր գործիքներ, որոնք նրանք կարող են օգտագործել արտահայտելու կամ հաստատելու իրենց տեսակետները և լինելու իրենց իրավունքների տերը:

Կարճ ասած՝ երբ մտածում ես այս տիրույթում քաղաքականության մասին, կարևոր է ըստ արժանվույն գնահատել թվային հեղափոխության դրական և ստեղծարար ասպեկտները և ձեռքբազատվել այն մտայնությունից, որ Համացանցը զուտ կամ հիմնականում վտանգի աղբյուր է, որտեղ երեխաները և երիտասարդները անընդհատ փորձանքների են ենթարկվում: Բացի այդ, մենք պետք է դադարենք Համացանցի և երեխաների ու երիտասարդների կողմից դրա օգտագործման մասին խոսելուց և մտածելուց կարծես թե դա իրենց կյանքի մի փակ կամ առանձին մաս է, որը հեշտորեն տարբերվում է «իրական կյանքից», որտեղ գործում են լրիվ այլ կանոններ և չափորոշիչներ: Երեխաների և երիտասարդների համար Համացանցը և այն սարքերը, որոնցով նրանք միանում են Համացանցին իրականում նրանց իրական կյանքի մասն են: Դպրոցում կատարվածը նրանք շատ արագ վերստին կրկնում ու կատարելագործում են Համացանցում: Իսկ Համացանցում կատարվածը նրանք շատ արագ վերստին կրկնում ու կատարելագործում են դպրոցում:

Սա շատ կարևոր անդրադարձներ ունի քաղաքականության համար: Սոցիալական աշխատողները, ուսուցիչները, իրավապահ մարմինների աշխատակիցները և յուրաքանչյուր ոք, ով մասնագիտության բերումով գործ ունի երեխաների հետ վճարովի կամ անվճար հիմունքներով, պետք է որոշակի պատկերացում ունենա տեխնոլոգիաների մասին և թե ինչպես են երեխաներն ու երիտասարդներն օգտվում դրանցից: Առանց

դա հասկանալու նրանք իրականում կտրված կլինեն երեխաների և երիտասարդների կյանքի կարևոր ասպեկտներից: Եվ եթե սա ճիշտ է երեխաների հետ աշխատող պրոֆեսիոնալների համար, ապա սա հատկապես ճիշտ է ծնողների և խնամակալների համար:

Այդուհանդերձ, ընդգծելով և մտապահելով նոր տեխնոլոգիաների դրական ասպեկտները՝ չես փախչի այն իրողությունից, որ Համացանցն իր հետ բերել է նաև մի շարք անցանկալի հետևանքներ: Դրանցից մի քանիսը կարող են նշանակալի վնասի ոռիսկեր պարունակել երեխաների և երիտասարդների համար. դրանք ներառում են երեխաների և երիտասարդների հետապնդման և սեռական ոտնձգությունների նոր ձևեր: Երեխաների շահագործում ներկայացնող՝ շրջանառվող պատկերների թիվը մեծապես աճել է: Ինտերպոլը և ներպետական իրավապահ մարմինները մեկ միլիոնից ավելի երեխայի շահագործման պատկերների են տիրապետում, որոնցում պատկերված են տասը հազարավոր տարբեր երեխաներ:

2011թ. դեկտեմբերի 17-ին Եվրամիությունում ուժի մեջ մտավ նոր Դիրեկտիվ երեխաների սեռական շահագործման, սեռական ոտնձգությունների և մանկական պոռնոգրաֆիայի դեմ պայքարի մասին: Սա լուրջ քայլ է ԵՄ-ի կողմից անդամ բոլոր պետություններում երեխաների պաշտպանության ընդհանուր իրավական դաշտ ստեղծելու առումով: Յուրաքանչյուր անդամ պետություն ունի երկու տարի, որպեսզի նոր Դիրեկտիվի պահանջներն ինկորպորացնի իր ներպետական օրենսդրության մեջ: Այդ ընթացքի մշտադիտարկումը և ոչ միայն իրավական հարթության մեջ, նաև քաղաքականությունների իրականացման առումով լուրջ խնդիր է eNACSO-ի համար այդ փուլին անմիջապես հաջորդող ժամանակահատվածում: Հանձնաժողովի տարբեր Վարչություններ ավելի ու ավելի են հետաքրքրվում երեխաների համացանցային անվտանգության օրակարգով: Դրան զուգահեռ, անհրաժեշտ կլինի շարունակաբար վերանայել ներքին կարգավորումները՝ ապահովելու քաղաքականության մշակման և իրագործման անխոչընդոտ համակարգումը:

3 Երեխաները, երիտասարդները և Համացանցը. ակնարկ

Համացանցը դարձել է կենսական անհրաժեշտություն ժամանակակից աշխարհում: eNACSO-ն խորապես հավատացած է, որ Համացանցն ունի ամենատարբեր ձևերով երեխաներին և երիտասարդներին հարստացնելու և հզորացնելու ներուժ: Դա է պատճառը, որ eNACSO-ն ակտիվորեն խթանում է Համացանցի բարիքների անվտանգ և հավասար մատչելիություն բոլոր երեխաների և երիտասարդների համար:

3.1 Դրական ուժ աշխարհում

Երբ երեխաների և երիտասարդների հետ խոսում ենք Համացանցի և նոր տեխնոլոգիաների մասին, անհրաժեշտ է պահպանել լավատեսական և դրական տրամադրություն: Մենք պետք է նպատակ դնենք հզորացնելու երեխաներին և երիտասարդներին, օգնելու նրանց կարողանալ ադապտացվել, ունենալ իրատեսական պատկերացում Համացանցի վտանգների մասին և իմանալ, թե ինչպես հաղթահարել դրանք:

3.2 Հասնել ճիշտ հավասարակշռության

Ծնողներն ու ուսուցիչները պետք է իմանան, թե ինչպես ճիշտ հավասարակշռություն սահմանել առցանց ռիսկերի հարցում իրատեսական մոտեցումների նկատմամբ՝ չչափազանցելով դրանք, ինչը հավանաբար կապաքաջալերի երեխաներին և երիտասարդներին տեխնոլոգիաներից օգտվելու հարցում: Սա մեծ կորուստ կլինի երեխաների և երիտասարդների՝ որպես անհատների, ինչպես նաև ողջ հասարակության համար:

3.3 Վիրտուալ և իրական աշխարհներն ավելի ու ավելի են մոտենում

Քանի որ երեխաներն ու երիտասարդներն իրենց կյանքի ավելի ու ավելի նշանակալի մասն են անցկացնում նոր տեխնոլոգիաների հետ և դրանց միջոցով, Համացանցում նրանց առջև հայտնվող ռիսկերի բնույթն ավելի ու ավելի է միահյուսվում

նրանց վարքագծի ավելի լայն ասպեկտներին: Այժմ արդեն համարյա անհնար է, եթե երբևէ հնարավոր եղել էլ է, հստակ սահմանազատել «Համացանցային հարցերը» «իրական աշխարհի» խնդիրներից: Սա կարևոր հետևանքներ ունի ծնողների և երեխաների հետ աշխատող մասնագետների համար:

Բացի այդ, Համացանցն, իհարկե, կարող է բազմապատկել առանձին երեխաների և երիտասարդների անհատական խոցելի կետերը, ինչը կարող է մեծացնել այն փորձությունները, որոնք նրանց առջև կժառանան իրական կյանքում:

3.4 Ինտերակտիվ և կլանող աշխարհ

Ժամանակակից ինտերակտիվ տեխնոլոգիաները, հատկապես խաղերի աշխարհում կարող են չափազանց կլանող լինել՝ ապահովելով խիստ գրավիչ միջավայր: Սա կարող է օգնել զարգացնելու խնդիրների լուծման բազմաբնույթ հմտություններ, սակայն այդ որակներն առաջացնում են նաև բազում նոր մտահոգություններ, հատկապես, այսպես կոչված, «կախվածություններ» կամ գերօգտագործում: Սա կարող է խոչընդոտել տարբեր միջանձնային հմտությունների կամ առողջ ապրելակերպի զարգացմանը, օրինակ՝ վարժությունների կամ սպորտով զբաղվելու միջոցով:

3.5 Թվային ջրբաժանը

Միավորված ազգերի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան (12-րդ հոդված) սահմանում է. «Իր հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համար մասնակից պետություններն ապահովում են դրանք ազատորեն արտահայտելու իրավունք այն բոլոր դեպքերում, որոնք վերաբերում են երեխային: Երեխայի հայացքների նկատմամբ ցուցաբերվում է նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրություն»:

3 Համացանց կարելի է մտնել տարբեր եղանակներով, այդ թվում՝ պլանշետներով, շարժական և անշարժ համակարգիչներով, նոթբուքերով, բջջային հեռախոսներով, խաղային համակարգերով, անձնական թվային սարքերով և հեռուստացույցով: Սույն փաստաթղթում այս ցանկը չկրկնելու համար, եթե տեքստում այլ բան սահմանված չէ, բոլոր այդ մեխանիզմներն էլ վերաբերելի են:

4 Եզրահանգումներ նոր լրատվամիջոցների ոլորտի ուսումնասիրություններից. Մտորումներ և մտահոգություններ երեխաների Համացանցային փորձառությունից, LSE, 2006

3.6 Կառավարությունների և միջազգային գործակալությունների դերը

7



Համացանցը կարող է ստեղծել միանգամայն հարստացնող միջավայր բազում օգտատերերի, հատկապես՝ երիտասարդների համար, սակայն քանի դեռ բոլոր երիտասարդների և երեխաների համար այն մատչելի չէ, այն կարող է նաև խորացնել այն ջրբաժանը, որ արդեն իսկ գոյություն ունի հասարակությունում կամ նույնիսկ առաջացնել նոր ջրբաժան: Այդ ջրբաժանը կարող է պայմանավորված լինել Համացանցից օգտվելու ֆիզիկական միջոցների առկայությամբ կամ բացակայությամբ: Պրոֆեսոր Սոնյա Լիվինգսթոնի ուսումնասիրությունը երեխաների և երիտասարդների առցանց գործունեության մասին վկայում է, որ⁴ անձի մեղիա գրագիտությունը և ինքնավստահությունը Համացանցից օգտվելու հարցում որոշիչ կարող է լինել այն հարցում, թե արդյոք և ինչ չափով է անձն օգուտ ստանում դրանից:

Այդ իսկ պատճառով թվային ջրբաժանի խնդիրը լուծելուն միտված քաղաքականություններ մշակելիս էական է, որպեսզի մեղիա գրագիտության նախաձեռնությունները համակցվեն ենթակառուցվածքի մատչելիության ընդլայնմանն ուղղված ջանքերի հետ:

Հասկանալի է, որ ազգային կառավարություններն են կրում իրենց իրավագործության ներքո գտնվող բոլոր երեխաների և երիտասարդների պաշտպանությունն ապահովելու առաջնային պատասխանատվությունը: Այդուհանդերձ, Համացանցը համաշխարհային միջոց է: Մա առանձնահատուկ պատասխանատվություն է ենթադրում միջազգային հաստատությունների համար, որոնք պետք է առաջնորդեն և խրախուսեն գործողությունները ազգային և միջազգային մակարդակներում:

ԵՄ-ն 5 առաջատար է այս ոլորտում: ԵՄ-ի «Ապահով Համացանցի օրը» իրականում համաշխարհային համարում է ձեռք բերել՝ առաջարկելով կարևոր շեշտադրումներ կրթության և իրազեկության ոլորտում բոլոր հինգ մայրցամաքների հիմնական լեզուներով: *Երեխայի առցանց պաշտպանություն*⁵ իր նախաձեռնության միջոցով Հեռահաղորդակցությունների միջազգային միությունը, որը Միավորված ազգերի մաս է կազմում⁶, նույնպես ներկայումս գլխավորում է մի շատ կարևոր համաշխարհային նախաձեռնություն, որը շարունակում է մեծ կարևորություն ստանալ: Եվ որ ավելի կարևոր է, ՀՄՄ-ն և ԵՄ-ն առավել մեծ հնարավորություններ ունեն օգնելու այն պետություններին, որոնք նոր են սկսել դիմագրավել երեխաների համացանցային անվտանգության մարտահրավերներին: Բոլորս կարող ենք սովորել այլոց փորձից:

⁵ <http://tiny.cc/eusip19>

⁶ <http://tiny.cc/itucop>

3.7 Էական է բազմաշահառու մոտեցումը

Համացանցը և առհասարակ SS ոլորտը բնութագրվում են շարունակական և արընթաց նորարարություններով: Այս զարգացումների համար պետք է մշակվեն այնպիսի քաղաքականություններ, որոնք խթանում են շարունակական օժանդակություններին և երիտասարդների մասնակցությանը առցանց աշխարհի իրադարձություններին՝ ճիշտ և համարժեք անվտանգության և միջոցառումների հաշվառմամբ: Որևէ առանձին մարմին կամ շահ՝ հանրային կամ մասնավոր, ընկերություն կամ այլ կազմակերպություն չպետք է մենաշնորհ սահմանի համացանցային անվտանգության գիտելիքների կամ մասնագիտական փորձառության նկատմամբ: Երեխաներին և երիտասարդներին անվտանգ համացանցային միջավայրով ապահովելը համապարտ պատասխանատվություն պետք է լինի:

Երեխաները և երիտասարդները պետք է պատրաստված լինեն համացանցային անվտանգության տեսանկյունից: Օտոնները, խնամակալները և ուսուցիչները պետք է օգնություն ստանան՝ հասկանալու, թե ինչպես են երեխաներն ու երիտասարդներն օգտագործում նոր տեխնոլոգիաները, որպեսզի նրանք էլ իրենց հերթին կարողանան օգնել երեխաներին ու երիտասարդներին առավելագույն օգուտ ստանալու և իմանալու, թե ինչպես անվտանգ օգտվել դրանցից: Դպրոցներն առանցքային օժանդակ դեր ունեն այստեղ: ՀԿ-ները ևս կարևոր են, սակայն նրանց ևս հարկ լինի որոշակիորեն օգնել անհրաժեշտ կարողություններ ձևավորելու հարցում, որպեսզի նրանք ևս կարողանան ներդրում ունենալ:

Համագործակցությունն իրավապահ մարմինների հետ ևս խիստ կարևոր է ապահովելու ուղերձների ճիշտ համակարգի մշակում և ներդրում կրթական և իրազեկման միջոցառումների ոլորտում:

Տնտեսության այս ճյուղն առանձնահատուկ դեր ունի և կարող է երկու եղանակով ներդրում ունենալ. առաջին՝ օժանդակելով բոլոր շահառուներին ստեղծելու և խթանելու արդյունավետ կրթական և իրազեկման ռեսուրսներ, ինչպես նաև ստեղծելու նյութեր իրենց սեփական հաճախորդների և շուկաների համար: Երկրորդ՝ մշակելով և խթանելով ավելի շատ և լավ տեխնիկական լուծումներ, որոնք օժանդակում և ամրապնդում են անվտանգության ուղերձները:

Այս համատեքստում eNACSO-ն ուրախ էր ողջունելու մի նախաձեռնություն, որը մեկնարկել էին մի քանի խոշոր բարձր տեխնոլոգիաների ընկերություններ՝ մշակելու համընդհանուր սկզբունքներ, որոնք արտացոլում են ինքնակարգավորման նոր շրջանակ Համացանցի համար ԵՄ-ի սահմաններում: Այս նախաձեռնության գազաթնակետն էր այն, որ 2012թ. փետրվարին հայտարարվեց S2S սկզբունքների դաշինքի մասին: Այս փուլում սահմանվում են նոր գործիքներ նախաձեռնությունն առաջ մղելու նպատակով: eNACSO-ն իր գոհունակությունն է հայտնում առ այն, որ Քարտուղարությունը, ցանցի առանցքային մի քանի անդամների հետ համատեղ, կարողացել է օգնել ձևավորել այս արդյունքը: Ի լրումն սրա՝ 2011թ. դեկտեմբերի 1-ին Հանձնաժողովի անդամ Նիլի Քրուզը հրապարակեց մի հիմնարար համաեվրոպական ծրագիր երեխաների համացանցային անվտանգության ոլորտում: Ծրագիրը կոչվում է «Համացանցը երեխաների համար ավելի ապահով դարձնելու կոալիցիա», իսկ դրա խնդիրներն ու նպատակները շատ կոնկրետ են: Նախաձեռնությունը պետք է ավարտվի մեկնարկից 18 ամիս անց: Եվ դարձյալ eNACSO-ն իր գոհունակությունն է հայտնում այն կապակցությամբ, որ դերակատարում է ունենալու այս բազմաշահառու խմբերում, որոնք աշխատանքն առաջ են տանում: Քրուզի կոալիցիան կենտրոնանում է հետևյալ հինգ հստակ նպատակների վրա.

Ահագանգելու պարզ և հուսալի գործիքներ, որոնք ունեն պարզ գործառույթներ արդյունավետ կերպով հնարավոր վնասակար բովանդակության կամ վտանգավոր իրավիճակի մասին տեղեկացնելու համար

Տարիքին համապատասխան գաղտնիության կարգավորումներ, որոնք հաշվի են առնում տարբեր տարիքային խմբերի կարիքները

Բովանդակության դասակարգման առավել լայն կիրառում, որը թույլ կտա մշակելու տարիքային դասակարգման պարզունակ սկզբունքներ տարբեր բնագավառների համար

Ծնողական վերահսկողության միջոցների ավելի լայն կիրառում

Երեխաների նկատմամբ ոտնձգություններ պարունակող նյութերի արդյունավետ հեռացում, համագործակցություն իրավապահ մարմինների և թեժ գծերի հետ



Երեխաների խոցելիությունները

Որպես երեխաների իրավունքներով և երեխաների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություն՝ մեր տեսլականի և համացանցային անվտանգության ոլորտում մեր աշխատանքի համար կարևոր է այն սկզբունքը, որ երեխաները և երիտասարդներն ավելի խոցելի են: Մա առանցքային սկզբունք է նաև երեխաների պաշտպանության, երեխաների սոցիալական ապահովության մի շարք քաղաքականությունների և օրենսդրության տեսանկյունից աշխարհի տարբեր մասերում գտնվող շատ տարբեր պետություններում:

Ինչ վերաբերում է Համացանցին, կան մի շարք խնդիրներ երեխաների և երիտասարդների խոցելիությունների հարցում, որոնք շարունակում են մտահոգիչ լինել: Դրանք ամփոփված են ստորև:

4.1 Բովանդակությունը

1. Համացանցի միջոցով երեխաները և երիտասարդները կարող են հասու դառնալ օրինական, սակայն տարիքային տեսանկյունից անհամապատասխան նյութի, օրինակ՝ չափահասների պոռնոգրաֆիայի կամ ծանրբռնություն արտահայտող պատկերների:

2. Համացանցը երեխաներին և երիտասարդներին հասանելի է դարձնում տարաբնույթ ապօրինի նյութերը, մասնավորապես՝ երեխաների նկատմամբ ոտնձգություններ պարունակող պատկերները:

4.2 Շփումներ

3. Համացանցի միջոցով երեխաները և երիտասարդները կարող են ենթարկվել հետապնդումների, կամ չարաշահող վարքագծի կամ սեռական ոտնձգությունների չափահասների կամ անչափահասների կողմից:


4. Համացանցը երեխաներին և երիտասարդներին հասանելի է դառնում վնասակար առցանց համայնքները, օրինակ՝ այնպիսի կայքերը, որոնք խրախուսում են անորեքսիան, ինքնախեղումը, ինքնասպանությունը, բռնությունը, ատելության խոսքը և քաղաքական ծայրահեղականությունը:


4.3 Վարքագիծ

5. Համացանցն ունակ է միջնորդելու և խթանելու ռիսկային սեռական փոխազդեցություններ երեխաների և երիտասարդների միջև, այդ թվում՝ խրախուսելով նրանց լուսանկարել իրենց կամ այլոց և տեղադրել դրանք ցանցում («sexting»), ինչը վնասակար լինելուց բացի կարող է լինել ապօրինի:

6. Համացանցն ունակ է միջնորդելու և խրախուսելու երեխաներին և երիտասարդներին հանրային տիրություն տեղադրել իրենց մասին տեղեկություններ կամ նկարներ, տեսանյութեր կամ տեքստեր, որոնք կարող են խաթարել նրանց անձնական անվտանգությունը կամ ապագա մասնագիտական հնարավորությունները: Անձի տեղակայումը բացահայտող ծառայությունների և շարժական կիրառական ծրագրերի (mobile apps) մշակումը, որոնք որակի պատշաճ ստուգում չեն անցնում, էլ ավելի են մեծացնում այդ ռիսկերը:

7. Քանի որ Համացանցի միջոցով երեխաները և երիտասարդները կարող են ենթարկվել հետապնդումների, դա կարող է խթանել նաև այնպիսի միջավայր, որտեղ երեխաներին և երիտասարդներին խրախուսվում է հետապնդել այլոց:





4.4 Առևտուր

8. Համացանցն ունակ է երեխաների համար մատչելի դարձնել և նրանք կարող են գնել օրենքով արգելված ապրանքներ և ծառայություններ:

9. Համացանցն ունակ է երեխաների համար մատչելի դարձնել և նրանք կարող են գնել իրենց տարիքին անհամապատասխան ապրանքներ և ծառայություններ:

10. Համացանցը երեխաներին և երիտասարդներին հասանելի է դառնում իրենց տարիքին անհամապատասխան գովազդներ, Համացանցի միջոցով երեխաները կարող են ենթարկվել խարդախության, ինքնության հափշտակության, խաբեբայության և նմանատիպ վտանգների, որոնք տնտեսական բնույթի են:

11. Համացանցն ունակ է խաթարելու երեխայի կամ երիտասարդի անձնական անվտանգությունը անհամապատասխան, անորոշ կամ անկատարելի տվյալների պաշտպանության կամ գաղտնիության

օրենքների պատճառով:

4.5 Կախվածություն

12. Համացանցն ունակ է հասու դարձնել խաղեր կամ ստեղծելու այլընտրանքային միջավայրեր, որոնք խրախուսում են կախվածություն դրսևորող վարքագիծ կամ Համացանցի չափից դուրս օգտագործում, որը կարող է բացասական ազդեցություն ունենալ առողջության և/կամ սոցիալական հմտությունների վրա:

4.6 Հասարակական գործոններ

13. Այն կարող է խորացնել կամ արմատավորել սոցիալական ջրբաժանը հասարակության ներսում թվային տեխնոլոգիաների օգտվողների և չօգտվողների միջև:

14. Մակրո մակարդակում ազգերի կամ տարածաշրջանների միջև թվային ջրբաժանը կարող է խորացնել համաշխարհային անհավասարության իրողությունները:

5 Հիմնական առաջարկություններ

5. 1Նոր դիրեկտիվը և ինստիտուցիոնալ հարցերը

1. Երեխաների նկատմամբ սեռական ոտնձգությունների, սեռական շահագործման և մանկական պոռնոգրաֆիայի մասին նոր Դիրեկտիվը պետք է ինկորպորացվի ազգային օրենքներում բոլոր անդամ պետությունների կողմից մինչև 2013թ. դեկտեմբերը:

2. Հանձնաժողովը պետք է արագ հայտարարությամբ հանդես գա առ այն, թե ինչպես է ապահովելու Դիրեկտիվի պահանջների լիարժեք կատարումն ընդհանուր առմամբ, այնպես էլ կոնկրետ այն քայլերի մասով, որոնք անդամ պետությունները պետք է ձեռնարկեն պայքարելու երեխաների նկատմամբ ոտնձգություններ պարունակող պատկերների առցանց տարածումը:

3. 2006թ. Հանձնաժողովն առաջարկել էր, որպեսզի երեխաների իրավունքները «ներարկվեն» ԵՄ-ի բոլոր քաղաքականություններում: Այդուհանդերձ, Հանձնաժողովն առաջօր հանդես է գալիս նախաձեռնություններով, որոնցից ակնհայտ է դառնում, որ դրանք մշակող թիմերը հաշվի չեն առել երեխաների անվտանգությունը կամ բարեկեցությունը իրենց առաջարկներում ամբողջությամբ կամ մասնակիորեն:

4. Հիմնարար իրավունքների գծով հանձնաժողովի

անդամի նշանակումը, որն ունենալու է միջուկորտային լիազորություններ, լավ հնարավորություն է գործող աշխատանքային մեթոդները վերանայելու հարցում:

Վարչությունների քաղաքականությունների մշակումը համակարգող ներկայիս գործիքները պետք է կատարելագործվեն, որպեսզի Հանձնաժողովը կարողանա հեղինակավոր կերպով և ժամանակին միջամտել քաղաքականությունների մշակման գործընթացին: Չնայած Արդարադատության գլխավոր վարչության Երեխաների իրավունքների բաժինը հզորացվել է, Երեխաների իրավունքների միջձառայողական խումբը կանոնավոր ժողովներ չի անցկացրել: Հստակ չէ նաև, թե ինչ մեխանիզմներ գոյություն ունեն Հանձնաժողովի անդամների միջև երեխաների իրավունքներին վերաբերող հարցերում:

5. Հանձնաժողովը պետք է կատարելագործի իր կարողությունները և մասնագիտական գիտելիքները երեխաների իրավունքների և առցանց միջավայրի հարցում: Հանձնաժողովի համապատասխան վարչությունները մեծապես կշահեն, եթե նշանակվեն փորձագետներ, անհրաժեշտության դեպքում, ոչ Հանձնաժողովից, ովքեր ավելի խորությամբ կտիրապետեն երեխաների իրավունքներին վերաբերող հարցերին: Այդ մասնագիտական գիտելիքներին պետք է հասու դառնան նաև ԵՄ-ի այլ ինստիտուտները:

5.2 Մասնակցության իրավունքի ապահովում յուրաքանչյուր երեխայի համար

1. Կառավարությունները պետք է խրախուսեն հանրային իրազեկություն խթանող քննարկումներ և տեղեկատվական արշավներ՝ խթանելու առավել բարենպաստ մշակութային միջավայր երեխաների և երիտասարդների մասնակցության համար բոլոր այն հարցերում, որոնք վերաբերում են իրենց և իրենց կյանքին:

2. Կառավարությունները պետք է նաև ավելի մեծ քաղաքական և ֆինանսական օժանդակություն ցուցաբերեն երիտասարդների էլեկտրոնային մասնակցության գործընթացներին՝ փորձելով խթանել մեդիա գրագիտությունը, կրճատել թվային ջրբաժանը և ստեղծել առավել անվտանգ S2S միջավայր: Այդ նպատակով նոր մեդիաների և մասնակցության նոր ձևերի օգտագործումը պետք է դառնա ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության անբաժանելի մասը:

3. Կարևոր է խթանել նաև ՄԱԿ-ի Կոնվենցիայի 12-րդ հոդվածի առավել լայն իրազեկումը և մշակել վերապատրաստման մոդուլներ՝ ցուցանելու դրա պրակտիկ կիրառությունը բոլոր այն մասնագետներին, ովքեր աշխատում են երեխաների հետ և նրանց համար, այդ թվում՝ ՀԿ-ների անձնակազմերի, S2S ճյուղի ներկայացուցիչների, իրավաբանների, դատավորների, ոստիկանության, սոցիալական աշխատողների, համայնքային աշխատողների, հոգեբանների, խնամքի ոլորտի աշխատողների, կրթական համակարգի բոլոր մակարդակների ուսուցիչների, բժիշկների, բուժքույրերի և առողջապահության ոլորտի այլ մասնագետների համար:

5.3 Երեխաների իրավունքների համակողմանի ռազմավարություն մշակելու անհրաժեշտությունը

1. ԵՄ-ն և ազգային կառավարությունները պետք է մշակեն համակողմանի և

փոխընդհանուր մոտեցում երեխաների համացանցային անվտանգության ոլորտում՝ ապահովելով վերջինիս լիարժեք ինտեգրումը երեխաների իրավունքների առավել ընդգրկուն ռազմավարության մեջ: Այդ կապակցությամբ Հանձնաժողովի 2012թ. մայիսի «Ավելի լավ Համացանց երեխաների համար»

հնապարակումը խիստ ողջունելի է: Ռազմավարությունն ամրապնդող քաղաքականություններ մշակելիս էական կլինի օգտվել բոլոր շահառուների մասնագիտական գիտելիքներից ու փորձից:

2. Հատկապես կարևոր է ստեղծել կրթական և իրազեկման ծրագրեր, որոնք միտված կլինեն երեխաների և երիտասարդների լսարանին: Իրավապահ մարմինները պետք է ճիշտ ուղիներ գտնեն իրենց ուղերձներն այդ ծրագրերում ներառելու համար:

3. Կարևոր է գտնել ուղիներ օգնելու ծնողներին և ուսուցիչներին հասնակալ նոր տեխնոլոգիաները և այն, թե ինչպես են դրանցից օգտվում երեխաներն ու երիտասարդները, որպեսզի կարողանան օգնել, խորհուրդ տալ և աջակցել նրանց:

4. Բարձր տեխնոլոգիաներով զբաղվող ընկերությունները հատուկ դեր ունեն իրենց հաճախորդների և շուկաների համար արդյունավետ կրթական ռեսուրսներ մշակելու և խթանելու ոլորտում շահառուների օգնելու գործում:

5. Բարձր տեխնոլոգիաներով զբաղվող ընկերությունները նաև հատուկ դեր ունեն այնպիսի տեխնիկական լուծումներ մշակելու հարցում, որոնք կնպաստեն երեխաների համացանցային անվտանգության մեծացմանը:

6. Նոր ապրանքներ և ծառայություններ մշակելիս բարձր տեխնոլոգիաներով զբաղվող ընկերությունները պետք է լիարժեքորեն հաշվի առնեն երեխաների անվտանգությունը:

5.4 Միջազգային առաջատար դերի խրախուսում

7. Համացանցի համաշխարհային բնույթը առանձնահատուկ պատասխանատվություն է ենթադրում միջազգային հաստատությունների համար, որոնք պետք է առաջատար և խրախուսող դեր ստանձնեն ազգային և միջազգային մակարդակներում:

8. Այնպիսի միջկառավարական և տարածաշրջանային նախաձեռնություններ, ինչպիսիք են ՄՏՄ-ի Երեխաների առցանց պաշտպանության նախաձեռնությունը և ԵՄ-ի Ապահով Համացանց ծրագիրն առանցքային դեր ունեն օրակարգն առաջ մղելու հարցում: Երբ Ապահով Համացանց ծրագիրն ավարտվի 2013թ., այն կփոխարինվի «Միացնելով Եվրոպան» ծրագրով, և շատ կարևոր կլինի պահպանել ԵՄ-ի առաջատար դերակատարումն այս հարցում: Միջազգային կառույցներն ունեն շատ լավ հնարավորություններ օգնելու այն պետություններին, որոնք նոր են սկսում դիմակայել երեխաների առցանց անվտանգության մարտահրավերներին:

9

10

11

12

13

15

16

5.5 Պայքար երեխաների հանդեպ ոտնձգությունների և ոտնձգություն պարունակող պատկերների տարածման դեմ

9. Համացանցի ի հայտ գալուց առաջ մշակված օրենքները փոփոխելու կարիք կլինի՝ ապահովելու, որ դրանք չարգելափակեն երեխաների համացանցային անվտանգության երաշխիքները: Օրինակ՝ ժամանակակից օրենքները պետք է ճանաչեն, որ երեխաների և երիտասարդների դեմ կարող են կատարվել մի շարք սեռական բնույթի հանցագործություններ այնպիսի միջավայրում, ինչպիսին Համացանցն է:

10. Շտապ անհրաժեշտ է ավելի մեծ աստիճանի ներդաշնակեցում ապահովել ոստիկանության այն ընթացակարգերում, որոնց միջոցով հավաքվում, պահպանվում և ներկայացվում են երեխաների հանդեպ առցանց կատարվող հանցագործությունների ապացույցները:

11. Կառավարությունները պետք է ապահովեն, որ իրավապահ մարմիններն ունենան պատշաճ ռեսուրսներ և արդի գործիքներ երեխաների նկատմամբ ոտնձգություններ պարունակող պատկերներ ներառող և երեխաների հանդեպ կատարվող այլ հանցագործությունները բացահայտելու համար: Մասնավորապես՝ քանի որ տեխնիկապես գրագետ հանցագործներն ավելի ու ավելի բարդ ուղիներ են գտնում թաքցնելու իրենց առցանց գործունեության հետքերը, կարևոր է ապահովել արդյունավետ ներթափանցման և ընդհատման այլ միջոցների ձեռնարկումը:

12. Անհրաժեշտ է հիմնվել ԵՄ-ի Ապահով Համացանց ծրագրի և այլ ծրագրերի շրջանակներում կատարվող ուսումնասիրությունների արդյունքների վրա. կառավարությունները պետք է ավելի մեծ ռեսուրսներ տրամադրեն՝ օգնելու իրավապահներին բացահայտել և փրկել այն երեխաներին, ովքեր հայտնվել են Համացանցով տարածվող ոտնձգություններ պարունակող պատկերներում:

13. Վերջին հայտարարությունը

Կիբեռհանցագործության եվրոպական նոր կենտրոնի ստեղծման մասին, որպես Եվրապոլի բաժանմունք, անչափ խրախուսիչ զարգացում է: Հաշվի առնելով երեխաների դեմ կատարվող առցանց հանցագործությունների միջազգային բնույթը՝ նոր Կենտրոնը պետք է ի վիճակի լինի անդրսահմանային մակարդակում դերակատարում ունենալ ազգային և տեղական իրավապահների դատահամակարգչային փորձաքննության և քննչական կարողությունների հզորացման գործում՝ դրանով իսկ օժանդակելով ազգային և տեղական ոստիկանության քննություններին, հատկապես՝ տուժողների բացահայտման գործում:

14. Էական են նաև թեժ գծերը, որոնց միջոցով հնարավոր է ստանալ հաղորդումներ երեխաների նկատմամբ ոտնձգություններ պարունակող պատկերների Համացանցային հասցեների վերաբերյալ: Յուրաքանչյուր պետություն պետք է ունենա մեխանիզմ, որը կբավարարի նրա իրավագործության ներքո գտնվող բոլոր լեզվական խմբերի կարիքները: Թեժ գիծը պետք է բավարարի կամ գերազանցի INHOPE-ի չափորոշիչներին:

15. Շատ կարևոր է, որ ապօրինի պատկերների համար սահմանվեն հեռացման ավելի արագ ժամկետներ ԵՄ-ում: Սրա համար կարող է պահանջվել, որպեսզի իրավապահներն ունենան լրացուցիչ ռեսուրսներ: Կարևոր է, որ ԵՄ-ի ոչ անդամ պետությունները ևս ուղիներ գտնեն բարելավելու այդպիսի պատկերների հեռացման արագությունը:

16. Ողջ աշխարհում միջազգային և միջկառավարական մարմինները, ազգային կառավարությունները, ոստիկանության մարմինները և այլք պետք է արագացնեն երեխաների նկատմամբ ոտնձգություններ պարունակող կայքերի հասցեների միասնական ցանկի կազմումը (կամ ցանկի, որը կլինի հնարավորինս մեծ, որը կհիմնվի ազգային որևէ ցանկի կամ բոլոր ցանկերի վրա, որոնց վրա ներկայումս չեն տարածվում տեղական իրավական արգելքները)՝ խթանելու երեխաների նկատմամբ ոտնձգություններ պարունակող առցանց նյութերի արդյունավետ հեռացումը, քննությունը կամ արգելափակումը: Ապահովված լինելով անվտանգության համապատասխան կարգավորումներով՝ այս ցանկը պետք է տրամադրվի համապատասխան առցանց ծառայություններ տրամադրողներին, տեխնոլոգիաների և ֆիլտրող ընկերություններին, ինչպես նաև այլ շահագրգիռ կողմերի:

17. Ողջ աշխարհում միջազգային և միջկառավարական մարմինները, ազգային կառավարությունները, ոստիկանության մարմինները և այլք պետք է արագացնեն երեխաների նկատմամբ ոտնձգություններ պարունակող պատկերների միասնական տվյալների բանկի ստեղծումը (կամ տվյալների բանկի, որը կլինի հնարավորինս մեծ, որը կհիմնվի ազգային որևէ բանկի կամ բոլոր բանկերի վրա, որոնց վրա ներկայումս չեն տարածվում տեղական իրավական արգելքները)՝ խթանելու երեխաների նկատմամբ ոտնձգություններ պարունակող առցանց նյութերի արդյունավետ հեռացումը, քննությունը կամ արգելափակումը: Ապահովված լինելով անվտանգության համապատասխան կարգավորումներով՝ այս տվյալների բանկը պետք է տրամադրվի համապատասխան առցանց ծառայություններ տրամադրողներին, տեխնոլոգիաների և ֆիլտրող ընկերություններին, ինչպես նաև այլ շահագրգիռ կողմերի:

18. Կառավարությունները, իավապահները և տնտեսության համապատասխան ճյուղի ներկայացուցիչները պետք է քննարկումներ սկսեն, թե ինչպես պայքարել երեխաների նկատմամբ ոտնձգություններ պարունակող պատկերների տարածման դեմ համակարգչից համակարգիչ և ինչպես պայքարել այլ տեսակի փակ խմբերի կամ համայնքների առաջացման դեմ, որոնք նույն նպատակն են հետապնդում:

19. Բարձր տեխնոլոգիաների ճյուղերը պետք է ուղիներ գտնեն կանխելու կողավորող ծրագրաշարի և այլ անանուն տեխնոլոգիաների հետ կապված չարաշահումները երեխաների նկատմամբ ոտնձգություններ պարունակող պատկերների փոխանակման ոլորտում:

20. Պետք է նաև դիմել Դոմենային անունների և IP հասցեների միջազգային կորպորացիա (ICANN)՝ նպատակ ունենալով հասնելու դոմենների անվանումների այն ռեգիստրների կարգավորման հարցում էական բարելավման, որոնք ներկայումս արդյունավետ չեն երեխաների նկատմամբ ոտնձգություններ պարունակող պատկերների հրապարակումը կանխելու հարցում:

21. ICANN-ից պետք է նաև պահանջել, որպեսզի վերջինս պարտավորվի, որ չի թույլ տալու որևէ ազգային կամ այլ ռեգիստրների ընդունել կամ թույլ տալ այնպիսի դոմենների գրանցումը կամ

պահպանումը, որոնք գովազդում կամ խթանում են երեխաների նկատմամբ ոտնձգություններ պարունակող պատկերները:

22. ICANN-ից պետք է պահանջել, որ դոմենների անվանումների տրամադրման և կառավարման համակարգը պահանջի ստուգել և հաստատել դոմեյնի անուն գրանցող կամ ձեռքբերող յուրաքանչյուր անձի ինքնությունը, ինչպես գնման, այնպես էլ նորացման ժամանակ: Հրատապ կարգով անհրաժեշտ է կատարելագործել WHOIS տեղեկատուի ճշգրտությունը:

5.6 Օժանդակության և ապաքինման ծրագրեր

23. Ոստիկանության, առողջապահության, սոցիալական աշխատողների, ուսուցիչների, պրոբացիոն և քրեակատարողական ծառայողների ակրեդիտացիայի համար պատասխանատու մարմինները պետք է ապահովեն, որպեսզի վերջիններիս մասնագիտական որակավորումները և մասնագիտական զարգացման ծրագրերը պատշաճ ուշադրության արժանացնեն տուժողների դեմ առցանց ոտնձգությունների ճանաչման վրա և տեղյակ լինեն այդ ոտնձգությունների տեսակներին:

24. Կառավարությունները պետք է ապահովեն, որ ստեղծվեն պատշաճ ռեսուրսներ անդրադառնալու սեռական ոտնձգությունների ենթարկված երեխաների կարիքներին, այդ թվում՝ այն դեպքերում, երբ այդ ոտնձգությունների պատկերները հայտնվել են Համացանցում:

25. Պատշաճ գնահատողական և ապաքինման ծրագրեր պետք է տրամադրվեն այն երեխաներին, որոնք դրսևորում են անպարկեշտ կամ ագրեսիվ սեռական վարքագիծ:

26. Համապատասխան մարմինները պետք է ապահովեն, որ ապաքինման ծրագրերը լինեն բավարար և որ այդ ծրագրերին մասնակցությունը Համացանցային հանցագործների կողմից ևս լինի բավարար:

5.7 Ստեղծել գովազդի, էլ. առևտրի, գաղտնիության և տվյալների պաշտպանության ստանդարտներ

27. Պետք է մշակել քաղաքականություններ և չափորոշիչներ, որոնք պաշտպանում են երեխաներին և երիտասարդներին տարիքին անհամապատասխան գովազդից և առևտրային գործունեությունից:

28. Համացանցը չպետք է դառնա մի բան, որի միջոցով ապրանքներ և ծառայություններ վաճառողները կարող են խուսափել այնպիսի օրենքներից, որոնք արգելում են ապրանքների և ծառայությունների վաճառքը որոշակի տարիքային խմբի պատկանող անձանց, օրինակ՝ ակոհոլը, ծխախոտը, պոռնոգրաֆիան, դրամախաղերը և զենքերի վաճառքը:

29. Պետք է մշակել համապատասխան կարգավորումներ տարիքային սահմանափակումով վաճառվող ապրանքների և ծառայությունների առցանց վաճառքի կանոնակարգման համար: Մասնավորապես՝ այդ կարգավորումները պետք է նաև նախատեսեն, որ գնորդի նվազագույն տարիքի հարցում պետությունների սահմանած տարբեր իրավական սահմանափակումները կարող են խրախուսել անդրսահմանային առևտրի զարգացումը տեղական օրենքներին հակառակ:

30. Մասնավորապես՝ եթե նախատեսվում է ունենալ «28րդ իրավագործություն» կամ վաճառքի ընդհանուր օրենք ԵՄ-ի համար, ապա այն պետք է ճանաչի և համապատասխան քայլեր ձեռնարկի ընդդեմ տարիքային սահմանափակում ունեցող ապրանքների և ծառայությունների անդրսահմանային վաճառքի հետ կապված վտանգների:

31. Չափահասների համար նախատեսված ապրանքներն ու ծառայությունները չպետք է գովազդվեն այնպիսի կայքերում, որոնցից օգտվում են հիմնականում երեխաները և երիտասարդները, կամ որոնք հայտնի են որպես կայքեր, որոնցից կանոնավոր կերպով օգտվում են երեխաներն ու

երիտասարդները: Պետք է հստակորեն սահմանել, թե ինչ է երեխաների համար նախատեսված կայքը, և ցանկացած գովազդ այդպիսի կայքերում պետք է համապատասխանի համարժեք կամ իրական գովազդային չափորոշիչների: Պետք է սահմանել մեխանիզմ լուծելու բոլոր տիպի վեճերն այն մասին, թե արդյոք որևէ կայք պետք է դասակարգվի որպես երեխաների կայք:

32. Կարգավորող մարմինները պետք է մշտադիտարկեն առցանց վճարումների ձևերը, որոնք անանուն են և, հետևաբար, կարող են հնարավոր դարձնել տարիքային սահմանափակում ունեցող ապրանքների և ծառայությունների վաճառքը կամ այլ ապօրինի առարկաների առևտուրը, օրինակ՝ երեխաների դեմ ոսնձգություններ պարունակող պատկերների: 33. ԵՄ-ի ինստիտուտների կողմից ներկայումս քննարկվող Տվյալների գաղտնիության դիրեկտիվի նախագծի լույսի ներքո eNACSO-ն աջակցում է ԵՄ-ի համար միասնական նվազագույն տարիքի գաղափարին. այդ տարիքից ցածր տարիքի երեխաների մասին տվյալներ հավաքող յուրաքանչյուր ընկերություն պետք է ստանա ծնողի գրավոր համաձայնությունը: Այդուհանդերձ, թե որ տարիքը պետք է դա լինի, պետք է սահմանվի համապատասխան ուսումնասիրության արդյունքում:

33. ԵՄ-ի ինստիտուտների կողմից ներկայումս քննարկվող Տվյալների գաղտնիության դիրեկտիվի նախագծի լույսի ներքո eNACSO-ն աջակցում է ԵՄ-ի համար միասնական 17 նվազագույն տարիքի գաղափարին. այդ տարիքից ցածր տարիքի երեխաների մասին տվյալներ հավաքող յուրաքանչյուր ընկերություն պետք է ստանա ծնողի գրավոր համաձայնությունը: Այդուհանդերձ, թե որ տարիքը պետք է դա լինի, պետք է սահմանվի համապատասխան ուսումնասիրության 18 արդյունքում: 19

34. eNACSO-ն չի օժանդակում նախագծի ներկայիս սահմանումը, որի համաձայն՝ ԵՄ-ն առանց որևէ բացատրության պետք է ընդունի՝ 20 ԱՄՆ-ի նվազագույն տարիքը, որն է 13: Այդ չափորոշիչն ԱՄՆ-ում ընդունվել է 20-րդ դարի վերջին այլ նպատակով և նախքան սոցիալական ցանցերի առաջացումը: Ավելին, դա մի չափորոշիչ է, որը հիմնականում չի պահպանվում ԱՄՆ-ում: eNACSO-ն նպատակ չի տեսնում մի համակարգ ներմուծելու հարցում, որը Եվրոպայում ևս անարդյունավետ է լինելու:

35. Շատ կարևոր է, որ պեսզի Տվյալների գաղտնիության նոր դիրեկտիվը արգելքներ չսահմանի երեխաների և երիտասարդների կողմից առցանց խորհրդատվություն և նրանց համար նախատեսված առցանց աջակցության ծառայություններ ստանալու ճանապարհին: Չի կարելի ակնկալել, որ երեխան իր հանդեպ ունեցած թույլ տվող ծնողից պետք է թույլտվություն հայցի այդ նույն ծնողից պաշտպանվելու համար:

36. eNACSO-ն շահագրգիռ է նորարարական ուղիների մշակման հարցում, որոնք կապահովեն, որ երեխաներն ու երիտասարդները հասկանան այլ գաղտնիության կարգավորումներ ընտրելու հետևանքները: Ավելի լայն 21 հնարավորություններ պետք է լինի ինտուիտիվ պատկերակներ (icon) և գրաֆիկական պատկերներ օգտագործելու համար:.

5.8 Անթերի անվտանգություն անլար աշխարհում

37. Քանի որ մեդիաներին միացումն էլ ավելի համատարած է դառնում, մենք շուտով կհայտնվենք մի իրավիճակում, երբ Համացանցը մատչելի կլինի ամենուր և ամենատարբեր սարքերից, որոնցից շատերը կլինեն շարժական և կպատկանեն երեխաներին և երիտասարդներին, օրինակ՝ սմարթֆոնները և խաղային համակարգերը:

38. Մենք շարժվում ենք դեպի միջավայր, որտեղ WiFi-ը կամ անլար Համացանցի առավել առաջադեմ եղանակները կդառնան Համացանց մտնելու ստանդարտ եղանակը:

39. Այդպիսի աշխարհում պետք է ապահովել երեխայի անվտանգության անթերի ռեժիմ: Ընտանիքում, որտեղ Համացանցին միացած են տասից ավելի սմարթֆոններ, խաղային համակարգեր, պլանշետներ, շարժական համակարգիչներ, MP3-ներ, ծնողներին անհրաժեշտ կլինի սովորել ապահովության տասնյակ եղանակներ:

40. Ռադիո և հեռահաղորդակցությունների տերմինալ սարքավորումների դիրեկտիվը կարող է խիստ օգտակար լինել այս առումով: Այս Դիրեկտիվը թույլատրում է սահմանել չափորոշիչներ ցանկացած սարքի համար, որը պետք է միանա հանրային գործող ցանցի, այդ թվում՝ Համացանցին: Այդ չափորոշիչները պետք է ներառեն երեխաների համացանցային անվտանգության հիմնական ասպեկտները:

41. Բջջային ցանցերի օպերատորները վաղուց են ընդունել, որ հատուկ պատասխանատվություն են կրում երեխաների և երիտասարդների հանդեպ: Միայն պատշաճ էլեկտրոնային առևտրի հնարավորություններ են մատչելի այն անչափահասների համար, ովքեր օգտվում են իրենց ծառայություններից: Չափահասների համար նախատեսված բոլոր ծառայությունները պետք է լինեն համապատասխան արգելքների տակ:

42. Տեղակայման ծառայությունների և տեղորոշման տեխնոլոգիաների նոր տեսակները, որոնք հեղեղել են սպառողական շուկան, մարտահրավերներ են առաջացնում ոչ միայն երեխաների և երիտասարդների առցանց անվտանգության հարցում, այլև յուրաքանչյուր քաղաքացու



քաղաքացիական և մասնավոր իրավունքների: Պետք է մշակվեն կայուն երաշխիքներ դրանց օգտագործման համար: Տեղորոշող բոլոր ծառայություններն ու կիրառական ծրագրերը պետք է դասակարգվեն որպես չափահասների համար նախատեսված:

43. Բջջային հեռախոսներ արտադրողները պետք է ավելի մեծ դերակատարում ստանձնեն Համացանցում երեխայի անվտանգության վերաբերյալ ընթացիկ քննարկումներում՝ նպատակ ունենալով մշակելու անվտանգության բնութագրիչներ, որոնք կգործեն ավտոմատ կարգով և ներդրված կլինեն հեռախոսների մեջ: Նրանք պետք է նաև մտածեն այնպիսի սարքեր ստեղծելու մասին, որոնց բնութագրիչները կլինեն ավելի փոքր հնարավորություններով և դրա շնորհիվ հնարավոր լինի խուսափել երեխաների և երիտասարդների առջև ծառայող այն ռիսկերից, որոնք կապված են ավելի բարդ մոդելների հետ:



44. Wifi կամ Համացանցի հեռակա մատչելիության տրամադրողները պետք է բջջային ծառայությունների օպերատորների օրինակով, որոնք սահմանափակել են չափահասների համար նախատեսված կայքեր երեխաների մատչելիությունը, նախատեսեն նմանատիպ կարգավորումներ:

5.9 Նավարկելով ինտերակտիվ և կլանող աշխարհում

45. Խաղեր և խաղերի սարքավորումներ արտադրողները պետք է համագործակցեն ինտերակտիվ և առցանց աշխարհի այլ մասնակիցների հետ՝ մշակելու տեղեկատվական արշավներ թվային քաղաքացիության և թվային պարտավորությունների ոլորտում: Տեղեկատվական



արշավները և գործողությունները՝ հիմնված կոլեգիալ կրթական նախաձեռնությունների վրա, պետք է հատուկ առաջնահերթության արժանանան:

46. Պետք է կատարելագործել Համեվրոպական խաղերի տեղեկատվական համակարգին (PEGI) ցուցաբերվող աջակցությունը և PEGI-ի առցանց համակարգերը՝ ներառելու հնարավորինս մեծ թվով պետություններ: Պետք է ավելին անել խթանելու խաղերի վարկանիշային գնահատման համակարգերի մասին տեղեկացվածությունը ինչպես երեխաների և երիտասարդների, այնպես էլ՝ ծնողների շրջանում:

47. Քանի որ կիրառական ծրագրերը տեղափոխվում են բջջային հեռախոսներից դեպի այլ շարժական սարքեր և համակարգիչներ, դրանք էլ ավելի կարևոր են դառնում ԵՄ-ի թվային տնտեսության համար: Հավանական է, որ դրանց ազդեցությունը կմեծանա մեր անձնական, սոցիալական, տնտեսական և քաղաքական կյանքում: Այս առնչությամբ կենսականորեն կարևոր է որակի վերահսկողության բարելավումը և ըստ տարիքի վարկանիշային գնահատման տարածումը:


21

5.10 Ավելի անվտանգ սոցիալական ցանցերի կայքեր

48. Սոցիալական ցանցերի կայքերը պետք է ունենան հստակ և թափանցիկ չափորոշիչներ երեխաների համացանցային անվտանգության ոլորտում, այդ թվում՝ դյուրօգտագործելու ընթացակարգեր ոտնձգությունների մասին համապատասխան մարմիններ հաղորդումներ ներկայացնելու համար:

49. Սոցիալական ցանցերի կայքերը պետք է ունենան հատուկ մեխանիզմներ, որոնք թույլ կտան իրականացնել նյութի վերանայում, հատկապես՝ նկարների և տեսանյութերի: Պետք է նաև ապահովել, որպեսզի նրանք վերանայեն նաև բոլոր հաղորդումները հստակ ժամկետներում:

50. Պետք է մշակել անկախ մեխանիզմներ մշտադիտարկելու և հաղորդումներ ներկայացնելու այնմասին, թե ինչ չափով են սոցիալական ցանցերի կայքերը պահպանում համաձայնեցված չափորոշիչները:



5.11 Վերացնել իրավական արգելքները

51. Պետք է ջանքեր ներդնել հստակեցնելու առցանց ծառայություններ տրամադրողների քաղաքացիական և քրեական պատասխանատվությունն օգտվողի կողմից իրենց կայքում ստեղծած նյութի առնչությամբ:

52. Մասնավորապես՝ հեղինակավոր հստակեցումներ պետք է արվեն Էլեկտրոնային առևտրի դիրեկտիվի «ապահով նավահանգիստ»-ների դրույթների առնչությամբ: Հոսթինգային ցանկացած ընկերություն, որը գուտ ստուգում է նյութը՝ հավաստիանալու, որ այնտեղ չլինի իր պայմանները չբավարարող որևէ բան, չպետք է պատասխանատվության ենթարկվի դա անելու համար: Սկզբունքը միշտ պետք է լինի այն, որ քաղաքացիական և քրեական պատասխանատվության ենթարկվելու համար հոսթինգային ընկերությունը պետք է իմացած լիներ այդ նյութի մասին կամ ծանուցվելուց հետո որևէ բան ձեռնարկած չլիներ այն ողջամիտ ժամկետում հեռացնելու համար:

5.12 ՀԿ-ների մասնակցությունը քաղաքականության մշակմանը

53. Քաղաքականության մշակման հարցում բազմակողմ մոտեցումն իրականում կախված է նրանից, թե որքանով առանձին կողմը կունենա կամք և միջոցներ մասնակցության համար: Որպես կանոն՝ շատ ՀԿ-ներ ունեն կամք, սակայն շատ հաճախ չունեն բավարար միջոցներ օպտիմալ ներդրում անելու համար: Պետք է ուղիներ գտնել օգնելու ՀԿ-ներին կատարելագործելու իրենց կարողությունները բազմակողմ քաղաքականության մշակման հարցում կառուցողական, իրազեկ և ժամանակին մասնակցություն ունենալու համար ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներում:



54. Ինքնակարգավորման մեխանիզմի նկատմամբ հանրային վստահությունը պահպանելու նպատակով անհրաժեշտ են համոզիչ ապացույցներ առ այն, որ երեխաների առցանց անվտանգությունը զգալիորեն բարելավվել է:



Անդամներ



eNASCO անդամներ



Instituto de Apoio à Criança



- 1 Ավստրիա
- 2 Չեխիա
- 3 Դանիա
- 4 Էստոնիա
- 5 Ֆինլանդիա
- 6 Ֆրանսիա
- 7 Գերմանիա

- 8 Հունաստան
- 9 Հունգարիա
- 10 Իռլանդիա
- 11 Իտալիա
- 12 Լիտվա
- 13 Լյուքս./Նիդեր.
- 14 Լեհաստան

- 15 Պորտուգալիա
- 16 Ռումինիա
- 17 Բրիտանիա
- 18 Իսպանիա
- 19

eNASCO ասոցացված անդամներ



1 Հայաստան

2 Գերմանիա

3 Ռուսաստան

4 Ուկրաինա

Լրացուցիչ տեղեկությունների
համար դիմեք

Մեդիակրթության կենտրոն՝

W: www.safe.am

E: info@safe.am

eNACSO

W: www.enacso.eu

E: info@enacso.eu

